# Հաճախ տրվող հարցեր (Frequently Asked Questions) (FAQs) «Տարեց, կույր և հաշմանդամ անձանցչքավորության դաշնային մակարդակի ծրագրի» շրջանակների ընդլայնում

1. **Ես կպահպանե՞մ «Medi-Cal»-ի իմ ապահովագրությունը:**
   Այո: Դուք «Medi-Cal»-ում ընդգրկված կմնաք: Եթե Դուք ծախսերի բաժին եք վճարում, ապա հնարավոր է, որ 2020 թ. դեկտեմբերի 1-ից Դուք իրավունակ լինեք անվճար «Medi-Cal» ստանալու:

2. **Ինչո՞ւ կարող է իմ «Medi-Cal»-ը փոխվել:**
   2020 թ. դեկտեմբերի 1-ից սկսած՝ California-ի նոր օրենքն ընդլայնելու է այն անձանց թիվը, որոնք իրավունակ են անվճար «Medi-Cal» ստանալու:

3. **Ի՞նչ պետք է ես անեմ:**
   Այժմ Ձեզնից ոչինչ անել չի պահանջվում: Ձեր շրջանը կորոշի, թե արդյոք Դուք իրավունակ եք: Եթե այո, ապա նրանք Ձեզ կընդգրկեն անվճար «Medi-Cal»-ում: Դուք փոստով նամակ կստանաք, որը Ձեզ կտեղեկացնի փոփոխության մասին:

4. **Ի՞նչ կլինի, եթե այժմ ես ծախսերի բաժին եմ վճարում:**
   Եթե Դուք ծախսերի բաժին եք վճարում և փոխադրվեք անվճար «Medi-Cal» (առանց ծախսերի բաժնի «Medi-Cal»), Ձեզ տեղյակ կպահվի այդ փոփոխության մասին:

5. **Եթե ես իրավունակ ճանաչվեմ անվճար «Medi-Cal»-ի համար, ինձ անհրաժեշտ կլինի՞ նոր Նպաստների նույնականացման քարտ (Benefits Identification Card) (BIC) ստանալ, որպեսզի կարողանամ օգտվել «Medi-Cal»-ի ծառայություններից:**
   Ոչ: Ձեր BIC-ը («Medi-Cal»-ի քարտը) կշարունակի գործել: Ձեր նույնականացման (ID) համարը նույնը կմնա: Դուք կարող եք շարունակել օգտվել Ձեր «Medi-Cal»-ից՝ ծրագրի կողմից արտոնված ծառայություններից օգտվելու համար: Ձեր ապահովագրության մեջ որևէ ընդհատում տեղի չի ունենա: Եթե Դուք BIC չունեք, զանգահարեք Ձեր շրջանային գրասենյակ: Խնդրեք, որ Ձեզ նոր քարտ տան:

6. **Եթե ես իրավունակ ճանաչվեմ այս նոր ծրագրի համար, որևէ կերպ կփոխվի՞ այն ձևը, որով ես օգտվում եմ «Medi-Cal»-ի ծառայություններից:**
   Հնարավոր է: Եթե Դուք «Medi-Cal»-ի ոչ մի առողջապահական ծրագրում ընդգրկված չեք, ապա փոփոխությունից հետո կարող է անհրաժեշտ լինել անդամագրվել որևէ ծրագրի: Մինչ «Medi-Cal»-ի որևէ ծրագրի անդամագրվելը՝ Դուք Ձեր նպաստները կարող եք ստանալ «վճարում ծառայության դիմաց»

(սովորական) «Medi-Cal»-ի միջոցով: «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի անդամագրվելու դեպքում՝ Դուք առողջապահական ծրագրի քարտ կստանաք «Medi-Cal»-ի Ձեր նոր ծրագրից: Ձեր բժշկին, ատամնաբույժին կամ որևէ այլ սպասարկողի այցելելիս միշտ ցույց տվեք ինչպես Ձեր BIC-ը, այնպես էլ Ձեր առողջապահական ծրագրի քարտը:

**Ծանոթություն:** Առողջապահական ծրագրում ընդգրկվելը Ձեզ համար կարող է **կամընտրական** (Ձեր ցանկությամբ) լինել: Եթե դա այդպես լինի, Դուք նամակ կստանաք: Դրանում կպարունակվեն տեղեկություններ և հեռախոսահամար, որով Դուք կարող եք զանգահարել հարցերի դեպքում:

7. **Ո՞րն է տարբերությունը «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»-ի և «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի միջև:**
«Վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»-ը, որը կոչվում է նաև «սովորական» «Medi-Cal», ապահովագրության տեսակ է, որը հնարավորություն է տալիս այցելել ցանկացած սպասարկողի, որն ընդունում է «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»: «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը սպասարկողների սեփական «ցանցն» ունեցող ապահովագրություն է: Ձեր տրամադրության տակ եղած տարբերակները կախված են այն շրջանից, որում Դուք բնակվում եք, և այն բանից, թե արդյոք Դուք նաև «Medicare» ունեք:

8. **Ինչպե՞ս կարող եմ պահպանել «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»-ի սպասարկողին:**
Հնարավոր է, որ Դուք կարողանաք պահպանել «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»-ի սպասարկողին, եթե Ձեր շրջանը նման ընտրություն տալիս է: Այդ ընտրության մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք ՀՏՀ 12-ը և ՀՏԸ 15-ը:

9. **Ինչպես է «Medi-Cal»-ն աշխատում «Medicare»-ի իմ ծրագրերի հետ:**
Եթե Դուք իրավունակ եք և՛ «Medi-Cal»-ի, և՛ «Medicare»-ի համար, ապա Դուք Ձեր բժշկական ծառայությունների և դեղատոմսային դեղերի մեծ մասը «Medicare»-ի միջոցով կստանաք: «Medi-Cal»-ն այնպիսի ծրագրեր ունի, որոնք կարող են վճարել «Medicare»-ի կողմից ամբողջությամբ չվճարվող որոշ նպաստների համար: «Medi-Cal»-ը կարող է նաև «Medicare»-ի Ձեր ապահովագինը վճարել: Ե՛վ «Medi-Cal»-ի, և՛ «Medicare»-ի միջոցով ապահովագրված անձինք, սովորաբար, ստիպված չեն անդամագրվել «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի, բացառությամբ այն շրջանների, որտեղ միայն «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրեր են գործում: Եթե անգամ Ձեզնից չի պահանջվում անդամագրվել որևէ

առողջապահական ծրագրի, Դուք կարող եք անդամագրվել, եթե ցանկանաք:

**10. Ի՞նչ է «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը:**

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրն առողջության ապահովագրության ծրագիր է, որը Ձեզ «Medi-Cal»-ի առողջապահական ծառայություններ է տրամադրում: «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերը կազմակերպում են «Medi-Cal» ստացողների բուժսպասարկումը: Դա Ձեզ համար անվճար է: Ծրագիրը համագործակցում է բժիշկների հետ՝ կազմակերպելով Ձեր բուժսպասարկումը և հոգ տանելով, որ Դուք ստանաք Ձեր առողջության պահպանման համար անհրաժեշտ ծառայությունները:

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում Դուք պետք է այցելեք այն բժիշկներին, որոնք աշխատակցում են տվյալ ծրագրին՝ որոշ բացառություններով: Դուք կարող եք ստուգումներ անցնել, բուժօգնություն ստանալ որևէ քրոնիկական հիվանդությունից, օրինակ՝ շաքարախտից, կամ վիրահատվել: «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը կվճարի բժշկական առումով անհրաժեշտ ծառայություններից մեծ մասի համար: Եթե «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը վճարում չի նախատեսում Ձեզ անհրաժեշտ որևէ ծառայության համար, «Medi-Cal»-ի այդ առողջապահական ծրագիրը կարող է օգնել Ձեզ տվյալ ծառայությունը ստանալ «Medi-Cal»-ի որևէ այլ ծրագրի կամ «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»-ի միջոցով:

**11. Ինչպե՞ս «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր ընտրեմ:**

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագրեր ընտրելու Ձեր հնարավորությունը կախված է այն շրջանից, որտեղ Դուք բնակվում եք: Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ անվճար ծրագիր փոխադրվեք, Դուք փոստով անդամագրման փաթեթ կստանաք, որը լրացուցիչ տեղեկություններ կպարունակի այն մասին, թե ինչպես «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր ընտրել: Դրանում կբացատրվի, թե «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրեր ընտրելու ինչ տարբերակներ Դուք ունեք և ինչպես կարող եք անդամագրվել դրանց: Եթե այժմ Դուք բժիշկ կամ կլինիկա ունեք, հարցրեք նրանց, թե արդյոք աշխատում են Ձեր շրջանում գործող «Medi-Cal»-ի որևէ ծրագրի հետ: Եթե ցանկանում եք շարունակել օգտվել այդ բժշկի կամ կլինիկայի ծառայություններից, ապա կարող եք ընտրել «Medi-Cal»-ի այդ ծրագիրը:

Եթե Դուք բարդ հիվանդություն ունեք, և Ձեզ սպասարկում է այնպիսի բժիշկ կամ կլինիկա, որը չի աշխատում «Medi-Cal»-ի՝ Ձեր շրջանում գործող որևէ ծրագրի հետ, բայց «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal» է ընդունում, ապա հնարավոր է, որ Դուք կարողանաք շարունակել նրանց ծառայություններից օգտվել:

Լրացրեք և ուղարկեք «Medical Exemption Request»-ի ձևաթուղթը, որը կստանաք Ձեր Անդամագրման ընտրության փաթեթում: Եթե Ձեզ «Medical Exemption Request» տրվի, այն Ձեզ թույլ կտա մնալ «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»-ում և շարունակել այցելել Ձեր բժշկին:

Այդ ձևաթղթի մի մասը պետք է Ձեր բժիշկը լրացնի: Ձևաթղթի մնացած մասը պետք է Դուք ինքներդ լրացնեք և վերադարձնեք «Health Care Options»: Ձեզ այդ հարցում կարող է օգնել Ձեր բժիշկը կամ կլինիկան կամ փաստաբանը: Եթե Դուք այնպիսի մի շրջանում եք ապրում, որը «Medi-Cal»-ը տրամադրում է «County Organized Health System»-ի (COHS) միջոցով կամ «Coordinated Care Initiative» (CCI) ծրագրով, հնարավոր է, որ չկարողանաք բժշկական պատճառով ազատում խնդրել: Դրա պատճառը կարող է այն լինել, որ Ձեր շրջանում «վճարում ծառայության դիմաց» եղանակով աշխատող բժիշկներ չկան:

Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագիր չընտրեք՝ այն դեպքում, երբ Ձեզնից պահանջվում է դա անել, «Medi-Cal»-ը Ձեզ համար «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր կընտրի Ձեր շրջանում: Եթե Դուք COHS նահանգում չեք ապրում, Դուք իրավունք ունեք ամեն ամիս փոխելու «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը:

Եթե ցանկանում եք փոխել Ձեր ծրագիրը, զանգահարեք «Health Care Options»՝ 1-800-430-4263 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ այցելեք https://www.healthcareoptions.dhcs.ca.gov: Եթե Դուք փոխեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը, Դուք պետք է անդամագրվեք «Medi-Cal»-ի՝ Ձեր շրջանում գործող որևէ այլ առողջապահական ծրագրի: Դուք չեք կարող վերադառնալ «վճարում ծառայության դիմաց» տարբերակին:

**12. Մինչև «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում ընդգրկվելը ինչպե՞ս եմ ես բուժսպասարկում ստանալու:**

Եթե Դուք ոչ COHS նահանգում եք ապրում, այն ամսում, երբ փոխադրվեք անվճար «Medi-Cal», Դուք կօգտվեք «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»-ից, մինչև անդամագրվեք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի: Դուք կարող եք այցելել «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal» ընդունող ցանկացած բժշկի: Բժիշկ գտնելու համար ծանոթացեք «Medi-Cal»-ի «վճարում ծառայության դիմաց» ծրագրում ընդգրկված բժիշկների առցանց ցուցակին: Ցուցակը զետեղված է https://data.chhs.ca.gov/dataset/profile-of-enrolled-Medi-Cal-fee-for-service-ffs-providers հասցեում: Երբ զանգահարեք բժշկի ընդունարան, հարցրեք, թե արդյոք նա ընդունում է «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»-ի նոր հաճախորդներ:

**13. Ո՞վ է լինելու իմ բժիշկը, երբ ես «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում լինեմ:**

«Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի անդամագրվելուց հետո Դուք պետք է նախնական բուժօգնության այնպիսի մի բժիշկ ընտրեք, որն աշխատում է «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի հետ՝ CCI շրջաններում գործող որոշ բացառություններով: Կարող եք Ձեր ներկա բժշկին հարցնել, թե արդյոք նա աշխատում է «Medi-Cal»-ի՝ Ձեր շրջանում գործող որևէ առողջապահական ծրագրի հետ: Եթե Ձեր բժիշկն աշխատում է «Medi-Cal»-ի՝ Ձեր շրջանում գործող որևէ առողջապահական ծրագրի հետ, ապա Դուք կարող եք պահել Ձեր բժշկին՝ ընտրելով «Medi-Cal»-ի այն առողջապահական ծրագիրը, որի հետ նա աշխատում է: Ապա, ծրագրին անդամագրվելիս, ընտրեք այդ բժշկին:

Եթե Ձեզ բժիշկ է հարկավոր, «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը Ձեզ կասի, թե որտեղ գտնեք բժիշկների առցանց ցուցակը: Կարող եք նաև խնդրել, որ բժիշկների ցուցակը փոստով ուղարկեն Ձեզ: Եթե Դուք բժիշկ չընտրեք, ծրագիրն ինքը Ձեզ համար բժիշկ կընտրի: Դուք կարող եք ցանկացած պահի փոխել Ձեր բժշկին: Բժիշկ գտնելու հարցում օգնություն ստանալու կամ Ձեր բժշկին փոխելու համար զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին: Եթե Դուք COHS ունեցող որևէ շրջանում եք բնակվում, ապա կարող եք զանգահարել Ձեր շրջանի COHS «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին: Հարցրեք, թե արդյոք «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում ընդգրկվելուց հետո կարող եք շարունակել այցելել Ձեր բժշկին:

**14. Կարո՞ղ եմ ես պահել իմ բժշկին, եթե իմ բժիշկը չի աշխատում «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի հետ:**

Եթե անցյալ 12 ամիսների ընթացքում Դուք այցելել եք մի բժշկի, որը չի համագործակցում «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի հետ, Դուք կարող եք «բուժօգնության շարունակման» դիմում ներկայացնել: Եթե այդ բժիշկը և «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը համաձայնեն միասին աշխատել, ապա Դուք կարող եք ևս 12 ամսվա ընթացքում շարունակել օգտվել Ձեր բժշկի ծառայություններից: Եթե Ձեզ «բուժօգնության շարունակում» է հարկավոր, զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին:

Եթե Դուք COHS ունեցող որևէ շրջանում չեք ապրում, բարդ հիվանդություն ունեք, և Ձեր բժիշկը «Medi-Cal»-ի՝ Ձեր շրջանում գործող որևէ առողջապահական ծրագրի

մաս չի կազմում, ապա կարող եք լրացնել «Medical Exemption Request» ձևաթուղթը՝ թույլտվություն խնդրելով շարունակել տվյալ բժշկի մոտ ստանալ Ձեր ծառայությունները:

**15. «Medi-Cal»-ի իմ առողջապահական ծրագրում ես համավճարումներ կատարելու՞ եմ:**

Ոչ: Համավճարումներ չկան: «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը վճարում է բժշկական առումով անհրաժեշտ բոլոր այն բժշկական ծախսերը, որոնք մտնում են ապահովագրական ծածկույթի մեջ:

**16. Ուրիշ ի՞նչ ծառայություններ կարող եմ ես ստանալ:**

**Ատամնաբուժական ծառայություններ**

Դուք կարող եք ատամնաբուժական ծառայություններ ստանալ «Medi-Cal»-ի միջոցով:

- Եթե Դուք Sacramento-ի շրջանում եք ապրում, այդ ծառայությունները կստանաք «Medi-Cal Dental Managed Care»-ի որևէ ծրագրի միջոցով: «Medi-Cal Dental Managed Care»-ի ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Health Care Options»՝ 1-800-430-4263 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ լրացրեք Ձեր Անդամագրման փաթեթում գտնվող Ատամնաբուժական ծրագրերի ընտրության թերթիկը:

- Եթե Դուք ապրում եք Los Angeles-ի շրջանում, կարող եք ծառայությունները ստանալ «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծրագրից՝ «վճարում ծառայության դիմաց» (սովորական «Medi-Cal» ատամնաբուժական ծառայությունների համար) ծրագրի կամ «Medi-Cal Dental Managed Care»-ի որևէ ծրագրի միջոցով: «Medi-Cal Dental Managed Care»-ի որևէ ծրագրի անդամագրվելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Health Care Options»՝ 1-800-430-4263 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ լրացրեք Ձեր Անդամագրման փաթեթում գտնվող Ատամնաբուժական ծրագրերի ընտրության թերթիկը:

- Մնացած բոլոր շրջաններում Դուք «վճարում ծառայության դիմաց» (սովորական) «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծառայություններ կստանաք «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծրագրի միջոցով: Դուք պետք է այցելեք «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծրագիրն ընդունող ատամնաբույժի: Ատամնաբուժական սպասարկող գտնելու համար կարող եք զանգահարել

«Medi-Cal»-ի Ատամնաբուժական հեռախոսային սպասարկման կենտրոն՝ 1-800-322-6384 (TTY՝ 1-800-735-2922) հեռախոսահամարով՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8:00-ից մինչև երեկոյան 5:00: Զանգն անվճար է: Ատամնաբուժական սպասարկող և ատամնաբուժական ծառայությունների մասին տեղեկություններ կարող եք գտնել նաև «Medi-Cal» ատամնաբուժական ծրագրի «Ժպիտ, California» կայքում՝ http://smilecalifornia.org/ հասցեով:

**Ընտանիքի պլանավորման ծառայություններ**

Ընտանիքի պլանավորման ծառայությունների մեջ են մտնում վերարտադրողական և սեռական առողջության ծառայությունները: Ծառայությունների թվում են հակաբեղմնավորիչ միջոցները, սեռական ճանապարհով փոխանցվող վարակումների ստուգումը և բուժումը, հղիության հետ կապված ծառայությունները և հղիության արհեստական դադարեցումը: Որպես «Medi-Cal»-ի նպաստառու՝ Դուք իրավունք ունեք ընտանիքի պլանավորման ցանկացած սպասարկող ընտրելու: Դրանց թվում կարող են լինել նաև «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի ցանցում չընդգրկված սպասարկողներ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրին:

**Հոգեկան առողջության ծառայություններ**

Եթե Ձեզ հոգեկան առողջության ծառայություններ են անհրաժեշտ, խոսեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի կամ Ձեր բժշկի հետ: Դուք կարող եք հոգեկան առողջության ծառայություններ ստանալ «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի միջոցով: Կամ հոգեկան առողջության ծառայությունների համար ծրագիրը կարող է Ձեզ ուղարկել «Medi-Cal»-ի հոգեկան առողջության՝ Ձեր շրջանում գործող ծրագիր: Կարող եք նաև հոգեկան առողջության ծառայություններ ստանալ Ձեր շրջանի հոգեկան առողջության ծրագրի միջոցով՝ առանց որևէ ուղեգրի:

**Ոգելից խմիչքների և թմրադեղերի կախվածությունից բուժման ծառայություններ**

Եթե Դուք ոգելից խմիչքների կամ թմրադեղերի օգտագործման հետ կապված խնդիր ունեք, կարող եք ստուգվել և պարզել, թե արդյոք Դուք «կախվածության հետ կապված խանգարում» («substance use disorder») (SUD) ունեք: SUD-ն ուղեղի ախտադարձային բուժելի հիվանդություն է: «Medi-Cal»-ը վճարում է բազմաթիվ SUD ծառայությունների համար: «Medi-Cal»-ի Ձեր նոր ծրագիրը Ձեզ կօգնի սպասարկող գտնել: Ծառայությունների համար կարող եք զանգահարել Ձեր շրջանի վարքաբուժության բաժանմունք:

**Դեղատնային ծառայություններ**
Եթե Դուք Ձեր բուժսպասարկողի կողմից տրված դեղատոմս ունեք, ապա «Medi-Cal»-ը կարող է վճարել Ձեր դեղերի համար, եթե Դուք դեղերի համար վճարող որևէ այլ ապահովագրություն չունեք կամ եթե ունեք դեղերի համար վճարող ապահովագրություն ունեք, բայց այն չի վճարում այդ դեղերի համար: Եթե Դուք իրավունակ եք «Medicare» ստանալու, ապա «Medicare Part D»-ն կվճարի Ձեր դեղատոմսային դեղերի մեծ մասի համար, իսկ Դուք պետք է կատարեք նախատեսված համավճարումները: «Medi-Cal»-ը կվճարի միայն փոքր թվով դեղերի համար, որոնք ընդգրկված չեն Ձեր Part D ծրագրում:

**Ոչ բժշկական փոխադրամիջոցներ և ոչ շտապ բժշկական փոխադրամիջոցներ**
Եթե Դուք բժշկին, կլինիկա, ատամնաբույժին այցելելու, Ձեր դեղերը վերցնելու կամ «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող որևէ ծառայության տրամադրման վայր ներկայանալու հնարավորություն չունեք, ապա Դուք կարող եք բավարարել Ոչ բժշկական փոխադրամիջոցից օգտվելու պահանջները: Բացի այդ, եթե Ձեզ փոխադրման հարցում օգնություն է հարկավոր՝ որևէ բժշկական և/կամ ֆիզիկական խնդրի պատճառով, հնարավոր է, որ Դուք իրավունակ լինեք ոչ շտապ բժշկական փոխադրամիջոցից օգտվելու համար: Ոչ շտապ բժշկական փոխադրամիջոցը շտապօգնության մեքենա է կամ անվասայլակով կամ պառկած անձանց համար հարմարեցված միկրոավտոբուս, և նախատեսված է այն անձանց համար, որոնք չեն կարող օգտվել հանրային կամ մասնավոր փոխադրամիջոցներից:

Ոչ շտապ բժշկական փոխադրամիջոց պատվիրելու համար Դուք պետք է որևէ հավաստագրված սպասարկողի կողմից տրված կարգադրագիր ունենաք: Ձեր բժիշկը, ատամնաբույժը, ոտքի բժիշկը, ինչպես նաև հոգեկան առողջության կամ կախվածության հետ կապված խանգարումը բուժող սպասարկողը կարող են ոչ շտապ բժշկական փոխադրամիջոցի կարգադրություն անել: Եթե Դուք «Medi-Cal» եք ստանում «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի միջոցով, զանգահարեք անդամների սպասարկման բաժին և փոխադրամիջոց պատվիրեք: «Վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»-ում գտնված ժամանակ Դուք կարող եք փոխադրման ընկերություն գտնել այցելելով https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Documents/List-of-Approved-Nonmedical-Transportation-Providers.pdf:

Եթե Ձեր տարածքում որևէ սպասարկող նշված չկա, Դուք չեք կարողանում փոխադրամիջոց ստանալ նշված սպասարկողներից կամ, Դուք «վճարում

ծառայության դիմաց» «Medi-Cal»-ում եք, կարող եք էլեկտրական հաղորդագրությամբ օգնություն խնդրել՝ գրելով DHCS-Benefits@dhcs.ca.gov հասցեով: Ձեր առաջին էլեկտրոնային ուղերձի մեջ անձնական տվյալներ **մի՛** նշեք: «Department of Health Care Services»-ի (DHCS) աշխատակիցները պատասխան կուղարկեն ապահով էլեկտրոնային հաղորդագրությամբ: Նրանք Ձեզ կխնդրեն տրամադրել Ձեր տվյալները: Ցանկալի է նման ծառայության համար ժամադրությունից առնվազն հինգ օր առաջ դիմել:

17. **Ինչպե՞ս կարող եմ լրացուցիչ տեղեկություններ կամ օգնություն ստանալ:**
Զանգահարեք «Department of Health Care Services»-ի (DHCS) «Medi-Cal»-ի օգնության հեռախոսագծով՝ 1-800-541-5555 կամ TTY՝ 1-800-430-7077: Զանգն անվճար է: Կարող եք նաև զանգահարել DHCS-ի Օմբուդսմանի գրասենյակ՝ 1-888-452-8609 կամ, TTY-ի համար, հավաքեք 711 («California State Relay»-ի համար)՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8:00-ից մինչև երեկոյան 5:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել նրանց՝ MMCDOmbudsmanOffice@dhcs.ca.gov հասցեով: Օմբուդսմանի գրասենյակն օգնում է «Medi-Cal» ունեցող անձանց օգտվել իրենց նպաստներից և հասկանել իրենց իրավունքներն ու պարտականությունները: